

հեղինակը, նախընտրում է *պատճեն* եզրը, սակայն իրականությունն այն է, որ նա ըստ երևույթին չի հասցրել միասնականացնել երկի հատուածների անունները, ուստի հնարաւոր է, որ երկի միւս հատուածները եւս առնուազն մասամբ պահպանել են գրաւոր սկզբնաղբիւրների վերնագրերը: Սակայն միեւնոյն ժամանակ որոշ եզրեր եւ իւրայատուկ արտայայտութիւններ թոյլ են տալիս մտածել, որ արտագրելով դրանք իբրեւ իր «շարադրութեան» գլխագրեր, Յովհան Մամիկոնեանը գոնէ ինչ-որ չափով փոփոխութիւններ կատարել է: Օրինակ՝ *Պարսից պատմութեան* առաջին մասերի գլխագրերում թողնելով *գլուխ* բնորոշումը, չորրորդն արտագրելիս նա, կարծէք, լրիւ վերյիշել է իր նախընտրած *պատճեն* եզրը («Պատճեն չորրորդ. գալոյն Վարդուհրայ...»): Ընդհանուր առմամբ, հիմնաւորուած չեն թւում *Պատմութիւն Տարօնոյ*-ն աւելի համակարգուած *գլուխ-պատճեն*-ների բաժանելու մի շարք ուսումնասիրողների փորձերը, ուստի մեր բնագրում հետեւել ենք ձեռագրերի գլխակարգութեանը, որով երկը բաժանուած է 11 հատուածի: Ընդ որում, ձեռագրերում բացակայող դրանց թուահամարները, իբրեւ պայմանական, տուել ենք քառակուսի փակագծերով՝ [Ա]-[ԺԱ]:

Աշխատութեան ընդհանուր վերնագիրը՝ ըստ յիշատակարանում առկայ եզրերի պէտք է լինէր *Ժամանակագրութիւն* կամ *Շարադրութիւն*: Եթէ գրչագրերի ճիւղագրութեան տրամաբանութեանը հետեւելով ընդունենք, որ Յովհանի գրած վերտառութիւնը պահպանել են Ա ձեռագրախմբի ԲԼ եւ Ն ենթախմբերը (*Սկիզբն պատմութեան Չորրորդ Հայոց եւ ժամանակագրութեանն Զենոբայ Ասորոյ, որ ձեռնադրեցաւ առաջին եպիսկոպոս ի սրբոյն Գրիգորէ երկրին Մամիկոնենից*), ապա նշելի է, որ նրա եզրաբանութիւնը բաւականին համահունչ է յիշատակարանի հետ: Ի դէպ, այս վերտառութեան «Չորրորդ Հայոց» եզրը պարզապէս նշանակում է Տարօնոյ կողմն - Տուրուբերան նահանգը ըստ Մովսէս Խորենացու *Աշխարհացոյցում* առկայ նահանգաթուարկման հերթական համարի («Արդ՝ ունի առաջին աշխարհի [Բարձր Հայք] գաւառս ինն... Երկրորդ աշխարհի Հայոց՝ Չորրորդ Հայք, որ է Օտփաց կողմն... Երրորդ աշխարհի՝ Աղձնիք... Չորրորդ աշխարհի՝ Տա[ւ]րուբերան...»), ինչպէս որ եզակի ձեւով այն ներկայացուած է քիչ անց, Ա գլխում՝ ոչ մի կապ չունենալով Չորրորդ Հայք - Օտփք նահանգի հետ: Իսկ դա նաեւ ցոյց է տալիս, որ Յովհանը բաւականին ուշադիր է եղել իր աղբիւրներն ընթերցելիս եւ արտագրելիս: Միւս ձեռագրերի պահպանած *Պատմութիւն Տարօնոյ, զոր թարգմանեաց Զենոբ Ասորոց եպիսկոպոսն* անուանումն անկասկած ԺԳ դարից ոչ ուշ կատարուած «մեծ խմբագրման» արդիւնք է: Բացի Բ խմբից, այն պահպանուել է նաեւ Ա խմբի ԲԼ ենթախմբի c, r եւ t գրչագրերում, որը պէտք է համարել հաւանաբար Բաղէշի դպրոցում ԺԷ դարի կէսերին ստեղծուած նրանց մայր օրինակի գրչի գիտական մօտեցման արդիւնք: Բոլոր դէպքերում, այդ վերտառութիւնը (համառօտ՝ *Պատմութիւն Տարօնոյ*) քաղաքացիութիւն է ձեռք բերել, ուստի այն պահպանել ենք տիտղոսաթերթում եւ սոյն առաջաբանում:

Իր ընդգրկած նիւթերի համակարգման որակով Յովհան Մամիկոնեանը թերեւս զիջում է հայ պատմիչներից շատերին, եւ հէնց նոյն պատճառով՝ դրանք շահում են աղբիւրագիտական հաւաստիութեան տեսանկիւնից: Միաժամանակ, հեղինակի ձեռքը նկատուած է գրեթէ բոլոր հատուածներում, յատկապէս նրանց վերջին մասերում, ուր կատարուած են տարբեր սկզբնաղբիւրների տեղեկութիւնների շաղկապ-